

նակ՝ իբրև մկնակների չափաղանց ճնշողութետն հետեւանք. զօռ տալու ժամանակ՝ իբրև հետեւանք կրծքի ներծծութեանը՝ հոսանքի յետադարձ կանգառութեան փոխանցելուն։ Որովհետեւ վենաները ունին նուազ առաձգականութիւն նոցա պատերը յոյլ են ուստի այսպիսի յետադարձ կանգառութիւնը ազգումէ ոչ ամբողջ համակարգութեան վերայ, այլ միայն այն տեղ, ուր ճնշողութիւնը աւելի սաստիկ է լինուամ։

Հարսանակելի ու նայութեալ դա (Թարգմ.) Բժ. Մ. Զ.

առեւ մոձ ու առաջն վանդրութիւն նոր մոհանութեան մէջ միանիաց քայլակար նույնականութիւն ունի այս ճառաւ ու խարը։ Ե զեւ լիւսացաւ բարանակու ու այս ինքնութեան իւսացըն ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ.
 Կարապետի հրաշալի ու առ մասեւ մասեւ առ այս մոհանութիւն վայրակաց մարմինները, ժամանակակիցէ և վիճակակից Հայոց ազգիս քրիստոնէութեան։ Մեր Ս. Լուսաւորիչը հիմնարկեց զայն իր առաքելութեան առաջին քայլափախին, զի Խնակնեան մայրավանուց տաճարին անկեան քարը էջմիածնայ Մայր Աթոռոյն անկեան քարին ժամանակակից է, և այն օրէն և այսր ոչ միայն մեծամեծ գործոց և արկածից թատրոն եղաւ։ Ս. Կարապետ, այլ և անիմանալի զուգատիպութեամբ վիճակակից գտաւ միշտ Հայաստանի ցաւոց և խնդութեանց վիճակներուն։ Հայ քրիստոնեայն, այն օրէն՝ որ սուրբ խաչը բարձրացաւ իր երկրին վրայ և Ա. Կարապետին նշխարքը սկսան փառաւորուելի ուր կիսանեայ կուռքը կը մաշտուէր, շարունակ իւր աղօթից և պաշտամանց մէջ Ս. Կարապետին անունը նշանաբան առաւ իրեն, և ամեն արկածից մէջ Ս. Կարապետի հզօր քարեխօսութիւնը իրեն պաշտպան ճանշցաւ, և Խնակնեան բարձրունքը եղեն Հայ քրիստոնէութեան մեծ ուխտատեղին, ուր իբր տասնուվեց դարերէ ի վեր, ոչ միայն մերձակայ քաղաքաց և գաւառաց այլ և հեռաւոր վայրաց և գտղթականու-

թեանց բնակիչք խմբովին գիմեցին և կըդիմեն շարունակ և ծնրադիր կըմտնեն լուսաւորչակերտ տաճարին մէջ, բերնով ու սրով կըհամբուրեն հրաշագործ նշխարքը փակող գերեզմանին շրթունքը և կընուիրեն առատօրեն որչափինչ իրենց ձեռքը կըբաւականանայ՝ ի զարդ և ի պայծառութիւն տաճարին և վանքին:

Պատմաբանից կ'ինկնի իւրաքանչիւր գարերու նշանաւոր գեպքերը քաղել և ստուգել և գեղեցիկ շարադասութեամբ յերիւրել, իսկ ես միայն վերջին կէս դարու յիշատակները քաղել կըբաղձամ, և այն՝ որչափ հնարէ, համառօտ կերպով:

Քրիստոսի 1829 թուականն էր, և վերստին Ռուսական և Օսմանեան ընդդիմամարտ գինուց աղբագը Հայկական գաւառները կողողէին: Քրտական հրոսակներ, չգիտեմ որով ոգւով վարելք, պատեհ առիթ կըկարծեն Ս. Կարապետի գանձերով հարստանալ, և յունիս 27ին Լուսաւորչայ պահոց հինգշաբթի օրը, յանկարծ կըթափուրեն այն վանքին վրայ, զոր սովոր էին պատուել և յարգել: Պետրոս վարդապետ Կարապյու, բնիկ միաբան Ս. Կարապետի, որ չորս հինգ տարուրենէ ի վեր վանահայր էր, և իրեն հետ եղող իբր քսան և հինգ վարդապետք և հարիւրի չափ վանականք, հազիւ իրենց կեանքը կտրող կըլինին աղատել: Քուրտեր գանձուց և հարստութեանց միայն ի խնդիր ամէն ծակերը կորունեն, դարաններ կըքանդեն, պատեր կըքակեն, և նոյն իսկ Ս. Կարապետի գերեզմանը կըփորեն՝ ծածկեալ գանձեր գտնելու յուսով: Հինգշաբթին և ուրբաթը իրենց աւարաժառութեամբ կըմաղին, շաբաթ՝ գիւահի նշխարաց մեծահանդէս տօնին օրը, Ս. Կարապետի վանքը կըմնայ աւերակ և ամայի, և մինչև հինգ ամիս բոլորովին անքնակ և անապատ կըմնայ շարունակ: Կըմաղին թէ Ս. Ասոռուածածնայ մատրան մէջ դարան մը միայն ծածկեալ կըմնայ, և այնտեղ պահուած որբոց մատունքը իրենց տուփերով և քանի մը խաչեր և քանի մը շուրջառներ կազատին, և ասոնք միայն են որ այժմ կըգտնուին իրունակին ժամանակաց զարդք և սպազք: իսկ ինչ որ այժմ կայ բոլորն ալ 1830 թուականէ և սյոր եկած նոր ընծաներ և նոր նուելիներ են: Ասպատակութեան վրայ եկած ձերան մէջ, 1830 տարբւայ սկիզբները, նորէն սկսաւ շէննալ Խնճակնեան մայրավանքը, և

Կուրավցի Պետրոս վարդապետ վանահայրն, որ թափառական կը շրջէր, գարձաւ իւր աթոռը, սակայն չկարողացաւ երկար մը-նալ: Արտաքնոց դաւաճանութեան երկիւղէն փախաւ ի կարին, և գաղթականութեամբ ամսայցեալ կարնոյ քաղաքին առաջնորդ-ալ եղաւ, և եպիսկոպոսութեան ձեռնադրութիւնն ալ ընդու-նելով կարնոյ և Տարօնոյ Հովիւ եղեւ միանգաման իբր ութն տարի իւր ներկայացուցիչ անուանելով ի Ս. Կարապետ բնիկ միաբաններէն Դաւոյեան Զաքարիա վարդապետը: Առաջնորդը և փոխանորդն համամիտ ջանիւք բոլոր իրենց ճիգը տուին Ս. Կարապետի շենքերը նորոգելու: Ուր արդէն ասպատակէն ալ յա-ռաջ նշանաւոր մասեր շինած էր կուրավցին, և գլխաւորա-պէտ երկու թեերու կամարակապ արտաքին սրահները և ներ-քին սենեակները:

Կուրավցի Պետրոս Արքեպիսկոպոսին յաջորդեց Եղեսացի Յա-րութիւն Արքեպիսկոպոսը, Ս. Երուսաղէմայ միաբան, որ Կար-նոյ առաջնորդութեան հետ Տարօնն և Ս. Կարապետն ալ ստա-ցաւ իրեն վիճակ, և Դաւոյեան Զաքարիա վարդապետի փոխա-նորդութեամբ կառավարեց Ս. Կարապետը, ուր առաջնորդա-կան աթոռին վրայ կը կարդացուի տակաւին իւր անունը: Թէ-պէտ Եղեսիացին Ս. Կարապետի համար մեծ գործ չունեցաւ, բայց Դաւոյեանի փոխանորդութիւնը օգտակար եղաւ Ս. ուխ-տին:

Փոխանորդական պաշտամանց մէջ ցուցած յաջողակութեամբ առաջնորդական պաշտաման հասաւ Զաքարիայ վարդապետ Դաւոյեան 1842ին, և Կուրավցին՝ որ հակառակ իւր գաղտնի ջանից չկրցաւ վերստին ձեռք ձգել պաշտօնը, մեկնեցաւ առ-ժամանակ մի ի Վան ուր առաջնորդութիւն ալ վարեց. և ան-տի ալ հալածուելով՝ կարնոյ մէջ առանձնական կենօք անցուց մնացեալ օրերը: Սակայն Ս. Կարապետի փառքը իւր սիրտէն շէր մարած և իւր արդեամբ շինել տուաւ Եկեղեցւոյ աւագ ուղանոյն և Ս. Կարապետի և Ս. Ստեփաննոսի տաճարաց մե-ծահարուստ և գեղեցկարուեստ խաչկալները: Խսկ Զաքարիա վարդապետ գործունէութեան նոր գրգիռ կը նդունէր Կ. Պոլոյ Պատրիարքարանէն, վասն զի 1849ին Փիղիքա Պօղոս վարդապետ նուիրակութեամբ և նոր կանոնադրութեամբ կը հասնէր ի Մուշ, և Դաւոյեան՝ որ բաւական աշխատած էր վանքին, և եկեղե-

ցւոյն նիւթական շինութեանց, իւր մոտադրութիւնը կըդարձնէր վարժարանի յառաջադիմութեան, և այդ նպատակին յարմար կըդտնէր յարմար գործակատար և օգնական մը, որ էր Մշեցի Զաքարեան Կարապետ վարժապետը։ Պատուելի Կարապետի արդիւնքը զգալի եղած է այն օրուէնէ ի վեր բոլոր Մշոյ դաշտին մէջ, որոյ ուսումնական հիմնադիրը իրաւամբ պէտքէ կոչել զնա։ Ուսմանց բարեկարգութիւնը յարմար վարժարան մընալ պահանջելով, զայն ալ հիմնարկեց իւր արդեամքը Դաւոյեան վանահայրը և աւարտեց 1850 տարւոյ աշնան Զաքարիան վարդապետին օգնութեամբ։

Սովորական է որ արդեանց ծայրը հալածանաց սկզբան մօտ լինի, և Դաւոյեան վանահայրը վարժարանի աւարտման տարին ըլրացած պքորական կըմեկնէր Ս. Կարապետէն, և Կեսարացի Կարապետ և Եօզդատցի Մատթէոս վարդապետք, Կեսարիոյ վանուց միաբանք, հազիւ մի մի տարի պաշտօն կըվարէին, ուրիշ յիշատակմը չթողնելով, բայց եթէ Զաքարիա վարդապետին բարի յիշատակները եղծանել, և վարժարանը տկարացնել, ուսուի կըմերժուէր նաև Կարապետ վարժապետ Եօզդատցւոյն օրով։ Պատուելի Կարապետ Ս. Կարապետէ ի Կարին փոխադրուելով, անդ ևս նոյնպիսի երախտեօք փառաւորած է իւր անունը, և այսօր իւր ծերութեան օրերուն մէջ իրաւամբ իւր արդիւնքներովը կուրախանայ։

Ս. Կարապետի ախուր վիճակը զօրաւոր ձեռքմը պահանջելով, միւս անգամ անոք վանահայրութիւնը և առաջնորդութիւնը յանձնուեցաւ Կարինյ առաջնորդին, որ էր յայնժամ՝ Զօրաքաբէլեան Դրիգորիոս արքեպիսկոպոս, որ իւր զօրաւոր հանճարով կարեսը կըհրամայէր, սակայն իրեն յարմար գործակատար մըն ալ գտած լինելու բաղդն ունեցաւ, և էր սա Կարապետ վարդապետ Բագրատունի, Ս. Կարապետի միաբաններէն, զոր իրեն փոխանորդ կարգած էր Զօրաքաբէլեան։ Բագրատունին երեք տարուոյ չափ արդիւնաւոր փոխանորդութիւն մը վարելէն յետոյ նոյն ինքն Զօրաքաբէլեանի առաջարկութեամբ Պատրիարքարանէ վանահայր նշանակուեցաւ և չորս տարւոյ չափ վարեց զայն մինչև իւր վաղահաս մահուան օրը ի 1859։ Բագրատունւոյն պաշտօնավարութեան միջոցն ունի շատ գովանի կողմեր մանաւանդ բարեկարգ մատակարարութեան և խաղա-

զութեան մասին:

Կեսարացի կարապետ եպիսկոպոսը, և Դաւոյեան Զաքարիա եպիսկոպոս, նախկին վանահարդ, կարճ օրերով Բագրատունիէն յետոյ նորէն վանահայրութիւն կատարեցին, ամակայն չկրցին պաշտօնը պահել ներքին երկպառակութեանց պատճառաւ, և Պատրիարքարանն Ս. Կարապետի վիճակը և ոքան գեղ լաւցածելու դիտմամբ վանահայրութիւնը յանձնեց Վարագայ միաբաններէն Խրիմեան Մկրտիչ վարդապետին: Այս եղան 1861 տարւոյն մէջ, Աւթին տարի ուղղակի իւր վրայ ունեցած է Խրիմեան վարդապետը, ապա եպիսկոպոսը, Ս. Կարապետի վանահայրութիւնը և Մշայ առաջնորդութիւնը և միանգամայն Վարագայ վանահայրութիւնը, ամակայն կրնակը ըսել թէ և ոչ տարի մը խաղաղ պաշտօնավարութիւն ունեցած է, և միաբանից հետ շարունակ վեճերով անցուցած է իւր օրերը և իրեն դէմ եղած են նոյն ինքն իւր ձեռնասուն նորընձայ միաբանները: Ա. մենայն ոք գիտէ ինչպէս բռնի արտաքսման պատրամութիւնն է, եղած էին վանահայր դէմ, երբ հեռագիրը աւետեց նորա ի պատրիարքական գահ ընտրութիւնը: Խրիմեանի օրով Ս. Կարապետի միաբանը նորադասուատ Սահմանադրութեան ակզրունքներուն յենլով իրենց մէջէն և իրենց քնտրութեամբ վանահայրը ունենաւու դատը կը վարէին: Խմկ Պատրիարքարանը և վանահայրը երբէք միաբանից այդ տկարութիւնը փայփակելու չէին աշխատեր, և քանի որ Վարագայ վանահայրութիւնը Խրիմեանի վերայ կը մնայր, նա օտար միաբանի կերպարանը կպահէր: Այս էր այն մեծ խնդիրներուն բուն պատճառը գրոյ համար Խարնոյ առաջնորդ Յարութիւն արքեպիսկոպոս վեհապետեան քննիչ յղուեցաւի Ս. Կարապետ, չղթայի և աքսորի ձայներ ալ լսուեան:

Այդ փոփսիս կիրքերը պատճառ եղած են որ Խրիմեանի օրով աղ վանական կառավարութեան հաստատուն ձև չէ տրուած: և վանեցի տարբների շատնակն ալ միարտաները վիրաւորուած է, և այն ութ ամաց մէջ վարժարան ալ նշանաւոր աշակերտներ չէ արտադրած, ոչ ոք կընայ Խրիմեանի կարողութիւնը մեղադրել ոուրբ նախանձայուղութեան վերայ երկրայել, ուստի պէտք ճանչնալ պարագայից աղդեցութիւնը, որ կրցած են զօրաւոր ձիրքերու զօրութեան ալ դէմ դնել: Խրիմեան Պատրիարք ըս

մերկացւու յանձնէ Ս. Կարապետի վանահայրութեան պատօնը
ուստի և Պատրիարքական գահէն կը վարէր վանահայրութիւնը
Վարագոյ միաբաներէն Սրուածուեանց Դարեգին վարդապետը
լոկ վանահայրական փոխանորդ նշանակելով, գլակ թշոյ առաջ-
նորդական պաշտօնին նշանակուած էր նոյնպէս Վարագոյ միա-
բաներէն Ազուանեան Գրիգորիս վարդապետը, Խրիմեան վա-
նահօր դէմ հակառակող միաբանները Պատրիարք վանահօր դէմ
ալ հակառակել չէին կարող ուստի և Պատրիարքական պաշտ-
պանութեան ներքեւ խաղաղ օրեր կրցաւ վայելի Սրուանձուեան
փոխանորդը և իւր ուշը գարձնել բարուոք մատակարարու-
թեան և բարուոք գաստիարակութեան։ Խսկ վարժարանի աշխա-
տակին մէջ իրեն օգնական և գործակատար ունեցաւ Ցրա-
պիզոնցի Թոմայեան Պողոս վարժապետը որ ընտիր աշակերաններ
պատրաստեց։ Սրուանձուեանի պաշտօնավարութեան արդիւնքը
անձնական ճգանց հետեւանք լինելով և միայն անձնական ձիր-
քերու վերայ յենլով, յաջող պաշտօնավարութենէ վերջ ալ
վանական կառավարութիւնն և վանական բարեկարգութիւնն
հիմնական ձեւ մը չունեցաւ։ Յայտնի չէ թէ զօրաւոր պաշտպա-
նութեամբ պաշտօնավարելուն, կամ թէ ուրիշ մի ներքին պա-
րագայի պատճառով, լաւ արդիւնքներէ վիրջ ալ երբ օտար
ճանչցուած Սրուանձուեանը սիրելի չեղաւ Ս. Կարապետի վանա-
կան միաբանութեան, և պարտաւորուեցաւ պաշտօնէ հեռա-
նալ նոյն ինքն պատրիարք վանահօր օրով, որ իրեն նոյր փոխա-
նորդ ընտրեց Մահպաղեան Մխիթար վարդապետը Խննակնեան
վանքի բնիկ միաբաններէն։ Մահպաղեանի փոխանորդութիւնն
գործունէութիւն չունեցաւ, զի պատրիարք վանահօրից քիչ
յետպ պատրիարքութեան գագարելովը Ս. Կարապետի վանա-
հայրութիւնն ալ միանգամայն թողուց։

Խրիմեան վարդապետ և Եպիսկոպոս և Պատրիարք վանահօր
Երկուասանամեայ անմիջաբար և միջնորդաբար պաշտօնավա-
րութեան ժամանակին վարուած միաբանական դատը իրեն լու-
ծումը ունեցաւ 1874 ին երբ Մամիկոնեան Մամրէ եպիսկոպոս
Ս. Կարապետի բնիկ միաբան և կարծեցեալ միաբանական իրա-
ւանց ջերմ պաշտպան, իւր միաբանից թէ ոչ ժողովական քո-
ւէարկութեամբ գոնէ համահան հաւանութեամբ ընտրուեցաւ
և լոկ վանահայրութիւն Ս. Կարապետի, հաստատուն մնալով

Իննուկնեան վանահայրութեան Մշայ առաջնորդութենէ բաժանումը: Մամիկոնեան վանահօր անգետլը, Ս. Կարապետի մէջ արդէն պաշտօն վարած լինելու իւր անձնական ձիքերը: Ախաբանութեան գրեթէ երաշխաւորեալ նախանձայութեանը, ոսկեդար մը գուշակիլ կուտային Ս. Կարապետի համար: Դրժէ բաղդաբար թէ պէտ ութամեայ պաշտօնավարութիւն մը ունեցաւ Մամիկոնեանը, սակայն անիբաւել չէ իրեն յիշատակին: Եթէ պարտաւորիկը ըսել թէ առաւել փառաւոր էր նորուանունը, երբ 1874 ին վանահայրական գահը բարձրացաւ, քանի երբ 1882 ին վանահայրական տիտուլն մահուան դամբարանը իջաւ: Այն փծուն խնդիրք, այն ներքին երկպառակութիւնը, այն անհիմն գժութիւնը, որք օտար միաբաններու ներկայութեանն կը լերազգուէին, նոյն կերպով ըրսեմ աւելի բացայաց կերպով: տևեցին նաև բնիկ միաբան և սիրեցեալ միաբան վանահօր մը օրովկ և գանգատող և բոլղքարկու միաբանից մէջ գտնսւեցան ոչ միայն Ամեն, Խրիմեանը յոգնեցնողներ, այլ և նոյն ինքն Գեր: Մամիկոնեանի հարազատ ձեռնասունները: Հանգուցեալ Մամիկոնեան վանահօր յիշատակին նութեալ սիրուալ մանր քննութենէ յետոյ ցաւով կը պարտաւորուի խոօսաւ վանել թէ, չէ կարող նորա ութամեայ պաշտօնավարութեան ժամանակէն, նշանաւոր և մնայուն արդիւնք մը գտնել: Թէպէտ և կը պարտաւորուի ճանչնալ նորու կարող հանճարը, և զօրաւոր կամքը, որոց վկայ կը մնան իւր գրութիւնները և զինքն ճանցուղներուն պատմութիւնները:

Մամիկոնեան վանահօր մահուանէ յառաջ ալ Ս. Կարապետի միաբանութիւնը նորէն երկպառակութեանց առաջարկեզ գործած էր, և երկու կողմերէն յուզուած գանգատները քննելու և վանքին բարեկարգութեան պայմանները զննելու պաշտօնը յանձնաւած էր Կարնոյ առաջնորդ Օրմանեան Մազմիթա վարդապետի: 1881 տարուան մերջերը: Թէպէտե 1882 մարտ 14 ին Մամիկոնեան Մամրէ եպիսկոպոսի մահուամբը հանդարատութիւն սկսած կը խորհուէր առաջայն պատրիարքարանի անհրաժեշտ գատեց քննութիւնը, որ և կատարուեցաւ օգոստոս ամսոյ մէջ Օրմանեանի ձեռամբ: Մինչեւ այն առենները տեղապահութեան պաշտօնը վարեց Շահնազարեան Խորէն վարդապետ, որ հանգուցեալ Մամիկոնեան վանահօր հակառակորդներուն:

պլխաւորն էր։ Քննութեան աւարտելէն և քննչին դառնալէն յետոյ պատրիարքարանը հրամայեց որ վանահօր ընտրութիւն կատարուէի և միաբանութեան ժողովին ալ նոյն ինքն Օրմանեանը վանահայր ընտրեց 1883ին, սակայն նորա ունեցած պաշտօնը և ժամանակին պարագայ քը չէին ներեր նոր պաշտօնը ըստուն ձնել։ ուստի առժամեայ տեղապահ նշանակուեցաւ Ս. Կարապետի լուսարարապետ Յակոբ վարդապետ Քաջունի։ Մինչեւ սր վանահայր մը ընտրուի Յետոյ 1885ին Արքատակէս եպիսկոպոս Գերձակեան վանահայր ընտրուեցաւ պատրիարքարանի կողմանէ, սակայն նա ալ նախ իբր տեղապահ յետոյ իբր առաջնորդ Ցիգրանուկերա փախագրուեցաւ և Ս. Կարապետի բարեկարգութեան գործը նաբէն առկաի մնաց, մինչև որ 1887 մայիսին Տրապիզոնի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան պատրիարքարանի կողմանէ լիազօր իշխանութեամբ յղուեցաւ ի Տարօն, Ս. Կարապետի վանահայրութեան և Մշոյ առաջնորդութեան գործերը բարեկարգելու։ Այդ նպատակին իբր միակ ճանապարհ որոշուեցաւ երկու պաշտօնները միացնել ըստ հին ստվրութեան նոյն անձի վրա, և այսպէս ալ կարգադրուեցաւ և նոյն ինքն Սրուանձտեան եպիսկոպոս վանահայր առաջնորդ ընտրուեցաւ միաբանութեան և ժողովրդեան կողմանէ։

Այդ յափի ինչ Ս. Կարապետի վրայ վարչական աելեկութիւններ տալէ յետոյ, պէտք է որ նիւթականին վրայ ալ խօսինք։

ԱԶԴԱՅԻՆ

Պարսից Արեգակնախավայլ նասրէտին շահնի առ Հայ ազգն ունեցած սիրոյ և շնորհաց իբրև մի նոր ապացոյց Եւր առաջն աստիճանին քանչան (Եւրապատկերն ականակուռ շրջանակի մէջ) շնորհել է ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Մակար Արքագիազոյն Կաթողիկոսին՝ ձեռամբ Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Գեր Գրիգորիս Արքեպիսկոպոսի։

Նորին գերապատութիւն Գրիգորիս Արքեպիսկոպոսն անցեալ Օքսոսոս ամսոյ 29ին ժամանելով ի Ս. Էջմիածն՝ յայտնեց